

ԿԱՆԱԴԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ա. ԲԵՔԱՐՅԱՆ

Հայերի արտագաղթը Կանադա և կանադահայ գաղութի ձևավորման ու զարգացման պատմությունը հիմնականում կարելի է բաժանել երեք ժամանակաշրջանի. նախնական կամ տարագրության շրջան (մինչև 1915 թ. եղեռնը), գաղութի կազմավորման շրջան (1920—1952) և գաղութի բարգավաճման ու պարգացման շրջան (1952 թ. մինչև մեր օրերը)¹:

1880 թ. սկսած հայերի որոշակի հատված Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից ապրուստ որոնելու նպատակով գաղթել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ համալրելով տեղի գործարանների բանվորների շարքերը: Այդ թվականից առաջին հայ տարագիրները երևացել են նաև Կանադայում՝ մասնակցելով կանադական խաղաղօվկիանոսյան երկաթուղու կառուցմանը: Սակայն Կանադա ժամանած առաջին հայը, ըստ երևույթին, Հյուսիսային Օնտարիոյում ոսկի որոնող ռմն Ա. Շահինն էր²:

XX դ. սկզբներին ամերիկյան գործարաններում աշխատուժի բավականաչափ հագեցվածության պատճառով հայ բանվորները սկսեցին համալրել նաև Կանադայի հարավային մասում գտնվող մի շարք քաղաքների (Բրանդֆորդի, Սենտ Քաթրինզի, Համիլտոնի, Տորոնտոյի և այլն) ֆաբրիկաները: Կանադա գաղթած հայերի մեծամասնությունը տղամարդիկ էին՝ հիմնականում գյուղացիներ, որոնց սկզբնական նպատակն էր մի քանի տարի աշխատել տարագրության մեջ, վաստակել որոշ գումար և վերադառնալ հայրենիք: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ հայերը հիմնականում գաղթել են Կեսարիայից, Բուրսայից, Բալուից, Կաբինից, Տարոնից, Կ. Պոլսից, Խարբերդից և առանձնապես Քղիից³: Այստեղ տեղի է ունեցել, որ մինչև 1908 թ. Թուրքիայից այնքան էլ հեշտ չէր մեկնել այլ երկրներ, քանի որ օրինական ճանապարհով այդ հնարավոր էր միայն արտագաղթի միջոցով, որի համար անհրաժեշտ էր ներկայացնել ճանապարհորդելու իրավունք, հրաժարվել քաղաքացիությունից և ունեցվածքից: Հենց դա էր պատճառը, որ հիմնականում քղեցիկները, չնայած ձերբակալման ու բանտարկման վտանգին, մեծ մասամբ մեկնում էին ապօրինի ճանապարհով: 1908 թ. սահմանադրությունը հանեց ճանապարհորդելու իրավունքի արգելքը, և Քղիի գյուղացիների համար Կանադան դարձավ ավելի մատչելի: Կանադայում ապրելը հնարավորություն էր տալիս կրթություն ստանալ, ունենալ աշխատանք և բարձր կենսամակարդակ: Կապը ընտանիքի հետ պահպանվում էր հիմնականում նամակագրության միջոցով: Կանադայից ստացված նամակները հայրենիքում ընթերցվում էին մեծ հետաքրքրությամբ, և նորությունները անմիջապես տարածվում էին: Շատ հայ երիտասարդներ, ոգևորված այդ նամակների գայթակղիչ լուրերից, որոշում են մեկնել Ամերիկա: Այդ երևույթին նպաստել է նաև Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում ամերիկացի և կանադացի միսիոներների

¹ 1915—1920 թթ. օսմանականատվածում կանադահայ գաղութի ձևավորման և ընդլայնման հարցը ստանում է ոչ օրինաչափ, տարերային բնույթ: Այդ ընթացքում կանադահայերը հիմնականում զրադված էին իրենց կորցրած բարեկամներին գտնելու և նրանց Կանադա տեղափոխելու գործով: Հոգվածում քննվում է գաղութի զարգացման ընթացքը մինչև 1980-ական թվականների սկիզբը:

² Armenians in Canada (Parochial Newsletter, Toronto, 1. X. 1967, vol. 1).

³ Նախկինում ավելի շատ հայտնի էր Կեղի, Կողորբոզ, Քեղի տարբերակներով: Հիշատակվում է իբրև գյուղ, ալան, գյուղաքաղաք, քաղաք: Գտնվում է Արածանի (արևելյան Սփրատ) աշակողմյան վտակ Քղի գետի աջ ափին, էրզրումից 132 կմ հարավ-արևմուտք:

ձևով լաված հոգու գործունեությունը: Քանի որ վերջիններիս արգելված էր տարածել իրենց կրոնը մահմեդականների մեջ, ուստի նրանք դպրոցներ, քոլեջներ, որբանոցներ և հիվանդանոցներ էին կառուցում քրիստոնյաների համար, ինչպես նաև գործադրում ամեն ճիգ ու ջանք նրանց բողոքական ու կաթոլիկ դառննելու նպատակով: Շատ հայ երիտասարդներ, կրթություն ստանալով՝ հյուսիսամերիկյան միսիոներ-մանկավարժների մոտ, ներշնչվում էին նոր գաղափարներով: Սակայն նրանց համար Կանադա ներթափանցելը այնքան էլ դյուրին չէր: Հենվելով «բարձր» ռասայի սկզբունքի վրա, կանադական ներգաղթի օրենքները գերադասություն էին տալիս արևմտյան և հյուսիս-արևմտյան նվորպայից գաղթողներին: Ըստ վերոհիշյալ սկզբունքի, ամենաստորին աստիճանում ասիացիներն ու նեգրերն էին: Հայերը Փոքր Ասիայի բնիկներ ու թուրքական հպատակներ էին և կանադական իշխանությունները չէին խրախուսում նրանց մուտքը Կանադա: Հաճախ նրանք ստիպված են թարկվում էին ներգաղթի խիստ կանոնադրությանը: Բնական է, որ նման պայմաններում այն հայերը, որոնց հաջողվում էր ներթափանցել Կանադա, աշխատանքի մեջ խտրություն չէին գնում՝ ներդրավելով արտադրությանը և ծառայությունների տարբեր ոլորտներում: Այսպես՝ Համիլտոնում հայերի մեծամասնությունը աշխատում էր ձուլարաններում, իսկ Կանադայի մյուս քաղաքներում նրանք բացում են սրճարաններ, վարսավիրանոցներ, նպարեղենի և քաղցրավենիքի խանութներ: Ժամանակավոր աշխատանքի ընդունված հայ բանվորները ապրում էին հայկական ոճով կահավորված սենյակներում և օգտագործում ազգային ճաշատեսակներ: Այդ կենցաղը նրանց, կարծես, հնարավորություն էր տալիս գրեթե միշտ լինել հարազատ միջավայրում, խոսել հուզող հարցների և նորությունների մասին: Հետագայում Կանադայում հայ կանանց ի հայտ գալը նպաստեց, որ այնտեղ աստիճանաբար ստեղծվեին հայեցի ոգին պահպանող ընտանիքներ: Անհրաժեշտ է նշել այն փաստը, որ կանադահայ գաղութի ձևավորման սկզբնական շրջանում հայերը հիմնականում կապված են եղել և գործակցել են իրենց ազգականների հետ: Դա առաջին հերթին վերաբերում է Համիլտոնի, Անտո Բաթրինգի ու Բրանդֆորդի գաղթօջախներին և բացատրվում է նրանով, որ այդ քաղաքների հայ բնակչության մեծամասնությունը գաղթել էր նույն շրջանից՝ Փոլիսից: Եվ միանգամայն բնական էր, որ հայրենիքում ունեցած ազգակցական կապերը շարունակվեցին նաև Կանադայում: Ներգաղթողների մտքերն ու զգացմունքներն համազուգականների, հայրենիքում թողած հարազատների հետ էին: Ցանկանալով նպաստել նրանց կրթությանը, նորարանակները ստեղծում են կրթական միություններ, որոնց խնդիրն էր դրամ ուղարկել հայրենիք՝ դպրոց կառուցելու, ուսուցիչներին աշխատավարձով ապահովելու, ինչպես նաև կարիքավոր երեխաների կրթությանը օժանդակելու նպատակով: Դրամական միջոցները կուտակվում էին հավաքություններից, ճաշկերույթներից և համերգներից: Այստեղ տեղին է նշել, որ սկսած 1910 թ. հայերը Կանադայում նույնպես ապահովեցին ազգային կրթություն՝ իրենց երեխաների համար: Սակայն հայերենի ուսուցումը սկզբնական շրջանում հնարավոր էր աշխատանքային օրերի միայն առանձին ժամերին կամ շաբաթ ու կիրակի օրերին, քանի որ աշակերտները հաճախում էին նաև կանադական դպրոցներ: Տիրապետել անգլերենին, նշանակում էր ստանալ կրթություն և կենսապայմանների բարելավման հնարավորություն: Չնայած դրան, հայերը անհանգստացած էին, քանզի իրենց երեխաները, դեռևս լիովին չտիրապետելով մայրենի լեզվին, խոսում էին սահուն անգլերեն: Այդ իսկ պատճառով կանադահայ գաղութի ավագները որոշում են պահպանել իրենց ազգային ոգին և սեփական ուժերով ստեղծում են ազգային դպրոցներ: Մինչև 1910 թ. երկու փոքր

4 Տե՛ս, օրինակ, ռո՛ր հայերը կրնան Գանատա մտնել, «Գանատա որո՞նք կրնան մտնել և ի՞նչպես», «Ամերիկայի և Գանատայի սահմանին վրա ինչպես կարելի է անցնել մեկ կողմն մյուսը» հոդվածները և. Խաչմանյանի «Ամերիկահայ հանրագիտակա տարեգրքում» (Բոստոն, 1925, էջ 360—369):

դպրոց է կազմակերպվում Բրանդֆորդում: Այդ գործում իրենց ավանդն ունեցան նաև ամերիկահայերը. դպրոցներում օգտագործվող դասագրքերից շատերը հրատարակվել էին Բոստոնում և Նյու Յորքում⁵:

Մինչև 1920-ական թվականները Կանադայում հայերեն թերթեր և հանդեսներ լույս չէին տեսնում⁶: Այդ ժամանակաշրջանում կանադահայ գաղութում ամենատարածվածը Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս տեսնող «Հայրենիք» ու «Երիտասարդ Հայաստան» հայերեն թերթերն էին: Այդ ժամանակ էր, որ Կանադայում սկսեցին կազմակերպվել հայկական գրադարաններ և ակումբներ, որոնք միաժամանակ ծառայում էին որպես սրճարաններ և քաղաքական հանդիպման վայրեր՝ տղամարդկանց համար, իսկ հետագայում նաև դպրոցներ՝ երեխաների համար⁷:

1915 թ. ցեղասպանությունն իր ազդեցությունն ունեցավ նաև կանադահայ գաղութի վրա: Եթե մինչ այդ հայ գաղթականները մշտապես ապրում էին այն հույսով, որ պանդխտությունը նրանց կյանքում ժամանակավոր բնույթ է կրում, ապա 1915 թ. հետո գաղթողներից շատերը ստիպված դարձան Կանադայի մշտական բնակիչներ: Դրանից հետո սկսվում է գաղթավայրի ձևավորման ու զարգացման մի նոր շրջան, որն ուղեկցվում է առանձին հաստատությունների ու միությունների ստեղծմամբ: Երբ 1915 թ. հայրենիքում կործանվում, ոչնչանում էին գյուղերը, Հյուսիսային Ամերիկայում, որպես սոցիալ-բարեգործական ու կրթական հաստատություններ, իրենց գործունեությունն էին շարունակում հայկական հայրենակցական միությունները: Քղեցիկների հայրենակցական միությունները⁸, որոնք ստեղծվեցին առաջին համաշխարհային պատերազմից հետո, արձագանքեցին քղեցիկ փախըստականների կարիքներին:

Կանադայում բնակություն հաստատած առաջին հայերից էր Կանադայի առևտրական կյանքում փայլուն դիրք գրաված, կանադահայ հայտնի գորգավաճառ և հասարակական գործիչ Լևոն Պապայանը, որը մեծ դեր է խաղացել կանադահայ գաղութի, հատկապես Տորոնտոյի հայ համայնքի ստեղծման ու զարգացման պատմության մեջ և հասարակական ու հայրենասիրական լայն գործունեություն ծավալել: «Պատերազմի ընթացքին,—ինչպես նշում է ինքը,—երբ մեր ժողովուրդը այնքան խժոժություններու զոհը կ'ըլլար, բնական է ո՛չ մեկ հայ կրնար անտարբեր մնալ: Ամեն ոք, ո՛ւր ալ գտնվեր, ի՛նչ դիրքի տեղ ալ ըլլար, պետք էր կատարեր պարտականություն իր բաժինը:

Տրված ըլլալով Գանատայի ազնիվ ժողովուրդի ջերմապես համակրական վերաբերումը մեզ հանդեպ, աշխատեցա որ՝ մեկ կողմեն տեղական թերթեր հետաքրքրվին մեզմով, ու մյուս կողմեն գանատական ժողովուրդի այդ ինքնաբերական տրամադրությունը ավելի գործնական ու կազմակերպված ձևով մը արտահայտվի: Ուրիշներու և իմ կողմե կատարված այդ ջանքերուն արդյունքը եղավ Armenian Relief Association -ը (Հայերի օգնության միություն — Ա. Բ.) որուն իրենց գործոն մասնակցությունը բերին շատ կարևոր գանատացի հարուստներ:

Այս ընկերությունը,—այնուհետև շարունակում է Լ. Պապայանը,—ընդհ. պատերազմի վերջին տարիներուն, հայ կարոտյալներու ի նպաստ մեկ մի-

⁵ I. Kaprielian, Armenian Supplementary Schools in Southern Ontario (Polyphony, 1982, vol. 4, № 2, p. 69).

⁶ Այդ թվականներին Կանադայում լույս են տեսել «Արարատ» և «Արագած» խմորատիպ հանդեսները, իսկ հայերեն առաջին պաշտոնաթերթը՝ «Ապագան», հրատարակվել է 1975 թ.:

⁷ I. K. [I. Kaprielian], Immigration and Settlement of Armenians in Southern Ontario: the First Wave (Polyphony, 1982, vol. 4, № 2, p. 25).

⁸ Այդ միությունները կոչվում էին Քզի (Քեզի) գյուղաքաղաքի և համանուն հավաքի գյուղերի անուններով (տե՛ս Պատմություն Կարնո կուսակալության. Քզի հավաքի Չանախի գյուղի, ՊԼՎԻ, 1977, էջ 68—72),

լիոն տուլարի մոտ գումար մը հավաքած և հաակացուցած է իր նպատակին»⁹։ 1915 թ. Մեծ եղեռնից, ինչպես նաև հուլյն-թուրքական պատերազմից հետո (1921—1922) շատ հայ որբերի տեղափոխեցին Քորֆու (Հունաստան), որտեղ նրանց խնամքը ապահովեցին բարեգործական ընկերությունները, ինչպես օրինակ, Լոնդոնի Լորդ Մեյլը ֆոնդը։ Կանադայի հայերի օգնության միությունը, իր կազմավորումից անմիջապես հետո, կարողացավ կանադական իշխանություններից թույլտվություն ստանալ հայ որբերին Քորֆուից կանադա տեղափոխելու համար։ Որբերի առաջին խումբը՝ 8—10 տարեկան հիսուն տղա, 1923 թ. Լ. Պապայանի նախաձեռնությամբ բերվեց Կանադա՝ Տորոնտոյից ոչ հեռու գտնվող Ջորջթաուն գյուղաքաղաքը։ Այնուհետև այնտեղ նրանց միացան ևս 50 որբ (սկզբում՝ 40, հետո՝ 10), և որբերի ընդհանուր թվաքանակը կազմեց հարյուր հոգի։ Նշենք, որ Ջորջթաունի որբերի խնամքը, որոնց շուտով անվանեցին «Ջորջթաունի տղաներ», 3—4 տարի իրականացրեց Հայերի օգնության միությունը՝ գթասիրտ կանադացիների նվիրատվությունների միջոցով։

Արժե հիշատակել, որ Լեոն Պապայանը վճռական և ազդեցիկ գեր խաղաց հայ որբերի ճակատագրի հարցում։ Երբ 1922 թ. Հայերի օգնության միությունը կազմեց իր այդ ծրագիրը, նա հասարակական կարգով նշանակվեց այդ կազմակերպության պատվավոր քարտուղար, իսկ հետագայում՝ ընտրվեց Ջորջթաունի հայ տղաների Տան և ագարակի կոմիտեի անդամ, որի պարտականություններն անմիջականորեն առնչվում էին հայ որբերի հոգսերի ու բարօրության հետ։ Ինչպես հայտնի է, Լ. Պապայանը միակ հայն էր վերոհիշյալ կազմակերպություններում¹⁰, և միմիայն նրան ենք պարտական, որ Ջորջթաունի տղաները հնարավորություն ստացան սովորելու հայերեն։ Այդ կազմակերպությունների հիմնական նպատակը և սկզբունքը ի սկզբանե հայ տղաներին կանադացի դարձնելն էր, սակայն Լ. Պապայանի գործադրած ջանքերի շնորհիվ, բազմաթիվ վիճաբանություններից, փաստարկներից ու պնդումներից, անհրաժեշտ դասագրքեր ձեռք բերելուց հետո, հնարավոր եղավ հասնել այն բանին, որ տղաները սովորեն իրենց մայրենի լեզուն։

1926 թ. Ջորջթաունի տղաները, որպես իրենց երախտագիտության առհավատչյա, սկսեցին հրատարակել Կանադայում առաջին հայկական հանդեսը՝ «Արարատ» ամսագիրը (հայերեն և անգլերեն), որը ծառայում էր իբրև հաղորդակցման միջոց ավագ սերնդի և «տղաների», ինչպես նաև Օնտարիոյի հայկական ուրիշ համայնքների միջև¹¹։ Երբ ուսուցիչ Ա. Ալեքսանյանը ձեռնամուխ եղավ իր այդ ազգաշունչ ծրագրի իրագործմանը, Լ. Պապայանը դարձավ նրա ամենաեռանդուն, ամենաջերմ և առաջին պաշտպանը՝ ցույց տալով բարոյական ու նյութական օգնություն։ Ընդհանրապես, Ջորջթաունի որբերի վերաբերյալ բոլոր բանակցություններում և որոշումներում Լ. Պապայանը ներկայացնում էր ոչ միայն իր սեփական հայացքներն ու Կանադայի հայկական համայնքների ձգտումները, այլև ազգի փշրված հույսը։ Նման վարքագիծը հաճախ բախվում էր Ջորջթաունի հայ տղաների Տան և ագարակի կոմիտեի այլ օտարազգի, անդամների տարամետ տեսակետների հետ, բայց Լ. Պապայանը կարողանում էր քաղաքական տարաձայնությունները պահել հանդուրժելի մակարդակի վրա¹²։

⁹ Լ. Պապայան, Պատեհություններու արժեքը (Հ. Խաչմանյան, Ամերիկահայ հանրագիտակ, Բոստոն, 1925 էջ 350)։

¹⁰ J. Apramian, Levon Babayan and the Georgetown Boys (Nor Seround, Toronto, 1976, № 1, p. 22). Տե՛ս նաև նույն թ. The Georgetown Boys, Toronto, 1976, p. 10—11.

¹¹ J. Apramian, Levon Babayan and the Georgetown Boys (Nor Seround, Toronto, 1976, № 1, p. 22).

¹² Նույն տեղում։

1924 թ. 1. Պապայանը կազմակերպեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կանադական մասնաճյուղը¹³, իսկ 1925 թ. ստեղծեց Կանադահայ միությունը, որն իր առջև նպատակ էր դրել պաշտպանել կանադահայերի քաղաքացիական իրավունքները, օգնել հայ գաղութների շքավոր ընտանիքներին, բացել հայկական դպրոցներ և բարելավել արդեն գործողների դրությունը: Միաժամանակ նշենք, որ Կանադայի ամենահին հայկական հաստատությունը 1896 թ. Պապայանի հիմնած գորգի ընկերությունն է: Միայն դրանից հետո Ս. Ութուջյանը հիմնեց թուրք-պարսկական գորգի ընկերությունը¹⁴:

Կանադահայերը համոզվեցին, որ ազգապահպան և մշակութային գործունեության բնագավառում իրենց սրբազան պարտականությունն է պահպանել ու յրացրել իրենց հետ բերած ազգային-մշակութային ժառանգությունը, ինչպես նաև հայկական անհատականություն սերմանել զավակների մեջ: Նվազ պատճառով հայկական դպրոցները դարձան համայնքի անհրաժեշտությունը և նրա անբաժանելի մասը: Աստիճանաբար ստեղծվեցին դպրոցական կոմիտեներ կամ դպրոցական խորհուրդներ, որոնք նորաստեղծ հայկական դպրոցներին համար գտնում էին համապատասխան շենքեր, վարձում ուսուցիչներ, որոշում նրանց հոնորարները, իսկ հետագայում՝ աշխատավարձը: Կոմիտեների անդամները զբաղվում էին դպրոցների հետ կապված բազմաթիվ հարցերով. մասնակցում էին քննություններին, օգնում ուսուցիչներին՝ պարբերաբար կազմակերպելով համերգներ, ներկայացումներ, զբոսախրճույթներ և բանախոսություններ: 20-ական թվականներին կանադահայ գաղութի դպրոցական շենքի սենյակները սովորաբար վատ էին լուսավորված և լեփ-լեցուն էին աշակերտներով, բայց դա լավագույնն էր, որ գաղութում կարող էր ձեռք բերել իր կազմավորման սկզբնական շրջանում: Համայնքը ձգտում էր ընտրել այնպիսի ուսուցիչ, որը կատարելապես տիրապետեր հայոց լեզվին և հաճույքով ու կամովին իր եռանդն ու ժամանակը նվիրաբերեր հայ երեխաների կրթության ու դաստիարակման շնորհակալ գործին: Այսպիսի հնարավորություն գաղութն ուներ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, 20-ական թվականներին զգալիորեն աճեց հայերի ներգաղթը Կանադա, իսկ ներգաղթողների մեջ կային բավականին թվով ուսուցիչներ: Բացի գրաճանաչությունից դպրոցում ուսուցանում էին հայ ժողովրդի և կրոնի պատմություն, սովորեցնում հայկական ժողովրդական ու հայրենասիրական երգեր: Դարասկզբում դասագրքերը հիմնականում ներմուծվում էին Կ. Պոլսի, Նյու Յորքի, Բոստոնի հրատարակչություններից: Դրանցից արժե հիշատակել Հ. Զաքմազյանի «Քերական-ընթերցարանը» (1916) և Ռ. Զարդարյանի «Մեղրագետը» (1927)¹⁵:

Եթե մինչև 20-ական թվականները հայկական դասագրքերը հիմնականում բլրոպական հեղինակների ստեղծագործությունների թարգմանություններն էին, ապա հետագայում հայերենի ուսուցման նպատակը Սփյուռքում արմատապես փոխվեց: Դասագրքերում առաջին հերթին շեշտը դրվում էր պատմության, հայ գրականության հարցերի, ինչպես նաև հայ մշակութային գործիչների կենսագրությունների ուսումնասիրության վրա: Կանադահայ գաղութի կազմավորման և զարգացման ժամանակաշրջանում նորաբնակների գործունեությունը հիմնականում կապված էր հայ ազգային մշակույթի պահպանման հետ: Հայկական դպրոցներն ունեցան իրենց որոշակի դերը կանադահայ երեխաների կրթության ու դաստիարակության գործում. հայերեն գրել-կարդալ սովորեցնելուց բացի նրանց տարրական գաղափար էին տալիս հայ էթնոշտության, թատրոնի և մշակույթի վերաբերյալ: Այդ առումով

¹³ O. Teghtsoonian, Armenians In Toronto: the Early Years (Polyphony, 1982 vol. 4, № 2, p. 97).

¹⁴ Armenians In Canada (Parochial Newsletter, Toronto, 1. X. 1967, vol. 1, p. 7).

¹⁵ I. Kaprielian, Armenian Supplementary Schools In Southern Ontario (Polyphony, 1982, vol. 4, № 2, p. 70—71).

կան-հայկական կոնգրեսի, ինչպես նաև Մոնրեալի հայ հասարակական գործի, Քերոլթե Պատկյանի²² ներդրած հսկայական ջանքերի և անդուլ աշխատանքի շնորհիվ բազմաթիվ հայ ընտանիքներ (շուրջ 2000 մարդ) Մերձավոր արևելքի երկրներում ստեղծված քաղաքական անկայուն դրության պատճառով թուրքիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Սիրիայից և Հունաստանից սկսեցին գաղթել Կանադա։ Կանադա մուտք գործելու իրավունքից բացի, գաղթողները հյուրընկալողներից ստանում էին նաև նյութական մեծ օժանդակություն։ Այսպես՝ «Միացյալ եկեղեցիների ընկերությունը» փոխատվության ձևով վճարում էր գաղթողների ճանապարհածախսի երկու երրորդը՝ հետագայում մաս առ մաս վերադարձնելու պայմանով, իսկ հունահայերի համար մնացած մեկ երրորդն էլ դարձյալ փոխատվության ձևով վճարում էր Ք. Պատկյանը, որը ստանձնել էր նրանց հովանավորությունը²³։

1961 թ. հունվարին կանադահայերի թվաքանակը կազմում էր 3500 մարդ։ Այդ հոսքը շարունակվեց նաև հետագայում։ 1979-ին Կանադայում արդեն բնակվում էր մոտ 30 հազար հայ, որի կեսից ավելին Մոնրեալում, Յ հազարը՝ Տորոնտոյում, մնացածը՝ Սենտ Փաթրիկսում, Համիլտոնում, Քվեբեկում, Օտտավայում, Վինձորում, Վանկուվերում և այլուր²⁴։ Արդեն հայաշատ դարձած Մոնրեալում ու Տորոնտոյում, ուր հայերը հիմնականում սկսել են հաստատվել 1950-ական թվականների կեսերից, նախկին երկրագործ գաղթականների փոխարեն հաստատվել են քաղաքային կյանքով ապրած մտավորականներ, գիտնականներ, բժիշկներ, ինժեներներ, դասախոսներ, ուսուցիչներ, ինչպես նաև արհեստավորներ ու բանվորներ։ Ազգային կյանքը համեմատաբար լավ է կազմակերպված վերահիշյալ քաղաքներում, որտեղ ներկայումս գործում են շուրջ երկու տասնյակ հասարակական կազմակերպություններ ու հայկական մշակութային օջախներ, որոնք զգալիորեն նպաստում և աջակցում են կանադահայ գաղութի ազգային, մշակութային, ուսումնական ու մարզական կյանքի աշխուժացմանը։ Մոնրեալում և Տորոնտոյում գործում են Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ), Համազգային և Թեքեյան մշակութային միությունների մասնաճյուղերը, շաբաթօրյա և ամենօրյա վարժարանները։ Վերահիշյալ միությունների նախաձեռնությամբ այդ քաղաքներում տրվում են նաև հայերեն ռադիո և հեռուստահաղորդումներ, կազմակերպվում մշակութային փառատոներ, հայկական գորգերի, դրամների, պարբերական մամուլի հավաքածուների ցուցահանդեսներ, հայոց լեզվի և հայ մշակույթի պատմության դասընթացներ, մարզական միջոցառումներ, հայկական կինոնկարների ցուցադրում, հայկական երաժշտության ունկընդորդում, գրական և գեղարվեստական երեկոներ, դասախոսություններ, թատերական ներկայացումներ և այլ ազգօգուտ միջոցառումներ ու ձեռնարկումներ։ Բացի դրանից գաղութում ակտիվ գործունեություն են ծավալել նաև Հայ օգնության միության մասնաճյուղերը (Տորոնտոյում, Մոնրեալում, Վանկուվերում, Համիլտոնում և այլուր), Վանկուվերի հայ մշակութային միությունը, Մարաշի (Տորոնտոյում) և Պոլսահայ (Մոնրեալում) հայրենակցական միությունները, Մոնրեալի և Համիլտոնի հայ ուսանողական միությունները, Հայ մարմնամարզական միությունը, Տորոնտոյի «Կոմիտաս» երաժշտական միությունը (որը ղեկավարում է Երևանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի շրջանավարտ, տաղանդավոր երգիչ Դավիթ Վարժապետյանը), «Գայանե» երգի-պարի համույթը և այլն։

Կանադահայ բնակչության շրջաններում ազգապահպան լայն աշխատանք են ծավալել նաև գաղութի բազմաթիվ հայ եկեղեցիներ, որոնց կից գործում են շաբաթօրյա կամ կիրակնօրյա դպրոցներ, երգչախմբեր, գրադարան-ըն-

²² Ք. Պատկյանը (1907—1981) ծնվել է Սեբաստիայում։ 1915—1918 թթ. մոր և երկու եղբայրների հետ ապրել է Հալեպում, իսկ այնուհետև տեղափոխվել Կ. Պոլիս։ Քեմալականների իշխանության գլուխ անցնելուց հետո փոխադրվել է Սոֆիա, իսկ 1926 թ.՝ Կանադա։

²³ Կ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 335։

²⁴ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 230։

թերցարաններ և այլ կազմակերպություններ: Այսպես, Սենտ Քաթրինզի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց հետո Տորոնտոյում գործում են ս. Նորդ-դուբյան Հայաստանյայց եկեղեցին (1958), «ուր կուգան խոսելու և երգելու հայ լեզուն»²⁵, Մոնրեալում՝ ս. Հակոբ Հայաստանյայց Առաքելական (1958), ս. Գրիգոր Լուսավորիչ Հայաստանյայց Առաքելական, Նարեկա ս. Տիրամայր Հայ Կաթողիկե, Հայ Ավետարանական եկեղեցիները և այլն²⁶, Վանկուվերում՝ Բրիտանական Կոլումբիայի ս. Վարդան Հայաստանյայց եկեղեցին (1980), որն իր շուրջն է համախմբել Վանկուվերում գործող ՀԲԸՄ-ի, Թեքեյան մշակութային միության, Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ), Պոլսահայ միության մասնաճյուղերը և համաձայնեցրել դրանց գործողությունները²⁷ և այլն:

Հարկ է նշել, որ եթե մինչև վերջերս կանադահայ գաղութում բավական ակնառու էր հայրենակցական նեղ շրջանակներում սահմանափակվելու, մյուսներից անկախ, գրեթե մեկուսացած գործելու ձգտումը, ապա վերջերս աստիճանաբար տիրապետող է դառնում այն առաջադիմական մտայնությունը, որ անհրաժեշտ է համախմբվել երկու-երեք կազմակերպությունների շուրջ, հզորացնել և ավելի արդյունավետ ու նպատակասլաց դարձնել դրանց գործունեությունը:

Այսպիսով, կանադահայ գաղութի հայրենասեր ուժերը գտնվելի ու նախանձնի հետևողականությամբ հաղթահարելով հսկայական դժվարություններ, լայն գործունեություն են ծավալում հայ բնակչության մեջ՝ ազգային ոգին վառ պահելու, նոր սերնդին կրթություն ու դաստիարակություն տալու, ծուլման վտանգից հնարավորին չափ զերծ պահելու համար: Դրան զգալիորեն նպաստում են նաև գաղութում գործող երգչախմբերը, թատերախմբերը և նվագախմբերը, որոնց թեկուզև միայն հայկաշունչ ազգագրերն ու հայտագրերն արդեն իսկ հոգեպարար մթնոլորտ են ստեղծում:

Բացի դրանից կանադահայերը միշտ էլ ակտիվորեն մասնակցել են ու շարունակում են մասնակցել Կանադայի գիտական, տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին: Ոչ քիչ թվով աչքի ընկնող հայ գործիչներ ունեցել են և ունեն իրենց վաստակն ու ներդրումը Կանադայի տեխնիկայի, բժշկության, առևտրի, արվեստի, ինչպես նաև գիտական ու հասարակական գործունեության այլ բնագավառներում: Ահավասիկ, Արքայական համալսարանի անատոմիական ֆակուլտետի ղեկավար, դոկտոր Ջոն Բասմաճյանը ականավոր բժիշկ գիտնական է, մկանային հյուսվածքների ուսումնասիրման ու բուժման յուրահատուկ մեթոդի հիմնադիրը Կանադայում, Յուսուֆ Փարշը (Օտտավա) աշխարհահռչակ դիմանկարիչ-լուսանկարիչ է, Համիլտոնի պողպատի ընկերության արտահանման ղեկավար, արդյունաբերող Ջավեն Մեսրոպյանը օգնել է կանադական պողպատե արտադրանքների արտահանման զարգացմանը և վաճառքի կազմակերպմանը արտասահմանում, միջուկային ֆիզիկայի մասնագետ, դոկտոր Արա Մուրադյանը Կանադայի ատոմային կենտրոնի կիրառական հետազոտությունների ղեկավարն է, Կանադայի առաջին հայ քաղաքագլուխը՝ Դիմի Ռիվեր քաղաքում, գոկտոր Ալբերտ Սաֆարյանը անվանի տնտեսագետ է²⁸, Հայտնի են նաև ֆիզիկոս Արշավիր Կյոնճյանը, հայագետ Գևորգ Պաղճյանը (վերջինիս նախաձեռնությամբ Մոնրեալի համալսարանում կազմակերպվել են հայագիտական դաս-

²⁵ Նոր սերունդ, Տորոնտո, 1973, № 8—9, էջ 9:

²⁶ Ա. Ի չխանյան, 25-ամյակ մը, որ գրավական է նոր 25-ամյակներու (Հորիզոն, 27. VI. 1983), Մոնթրեալի փեթակը (Նույն տեղում):

²⁷ Վանքուվերի հայ գաղութին տակավ ղարգացող ազգային կյանքը (Ապագա, Մոնրեալ, 16. IV. 1984):

²⁸ Armenians in Canada (Parochial Newsletter, 1. X. 1967, vol. 1, p. 8); Տեքե-Արա Մուրադյան առաջին հայ քաղաքագետը Գանատայի մեջ (Կ. Գևորգյան, Ամենուն տարեգիրքը, Պեյրուի, 1959, էջ 561):

րնթացներ), Կանադայի նկարիչների Արքայական միության անդամ Արման Թադևոսյանը, լուսանկարիչ Արթին Գավուքը, օպերային երգիչներ Սելմա Քեքլիկյանը և Դավիթ Վարժապետյանը, շուժակահար Ժիրայր Գանթարճյանը, բեմագրիչ Պերճ Ֆազլյանը և շատ ուրիշներ²⁹։

Այսպիսով հայերը Կանադայում կարողացան պահպանել իրենց ազգային մշակույթը։ Նրանք շարունակեցին խոսել իրենց պապերի լեզվով, որը, որպես կտակ, իրենց հերթին փոխանցեցին նաև իրենց զավակներին, քանի որ նոր միջավայրում ապրելուց և գոյատևելուց բացի կար շատ ավելի կարևոր մի խնդիր՝ հայեցի ապրելու, շօտարանալու, շնչվելու ազգապահպանման խնդիրը։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В КАНАДЕ

А. А. БЕКАРЯН

Р е з ю м е

Армяне обосновались в Канаде с 1880 г., вначале — в Брандфорде, Сент-Катаринсе, Гамильтоне, Торонто, а в дальнейшем — в Монреале, Оттаве, Ванкувере и т. д.

В Канаде функционируют многочисленные армянские общественно-политические, культурные, земляческие, благотворительные, студенческие и спортивные организации, церкви, школы и т. д. Преодолев огромные трудности, они развернули широкую деятельность среди армянского населения с целью сохранения национальной самобытности.

FROM THE HISTORY OF THE ARMENIAN COLONY IN CANADA

A. A. BEKARIAN

S u m m a r y

The Armenians settled in Canada since 1880, first in Brandford, St. Catharines). Hamilton, Toronto, and later in Montreal, Ottawa, Vancouver, etc.

In Canada numerous Armenian public, political, cultural, regional, charitable, student and sports organizations, churches, schools, etc. are functioning. Having overcome tremendous difficulties, they deployed extensive activities in the midst of the Armenian population in order to retain national identity.

²⁹ Մեծ արվեստագետները Գանատայի մեջ. Արման Թադևոսյան (Նոր սերունդ, Տորոնտո, 1974, № 9—10, էջ 12), Երիտասարդ տաղանդավոր նկարիչ Արման Թադևոսյանի ցուցահանդեսը Մոնրեալի մեջ (Ապագա, 18. X. 1975), Գեղանկարչական ակումբ (Հայրենիքի ձայն, 12. V. 1976), Արմենյան թատերախումբը (Հայրենիքի ձայն, 14. XII. 1977), Դ. Էվեբեկլյան, Տիկ. Սելմա Քեքլիկյանի հետ (Քուլիս, 4. Պուլիս, 1980, № 795, էջ 21), Վ. Գիսակյան, Դավիթ Վարժապետյան (Հայրենիքի ձայն, 20. VI. 1979) և այլն։